# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

## ՆՄՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/35 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **21 նոյեմբերի 2022թ.**

2022թ-ի նոյեմբերի 21-ին ՀՀ, ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68 հասցեում գտնվող ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ համակարգչային տեխնիկայի պահեստամասերի ձեռքբերման ՆՄՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/35 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Հ. Սարաջյան՝ «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի համակարգչային տեխնիկայի, ցանցերի և հարակից սարքերի սպասարկման բաժնի պետ,

Ա. Միքաելյան՝ «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի համակարգչային տեխնիկայի, ցանցերի և հարակից սարքերի սպասարկման բաժնի համակարգչային տեխնիկայի սպասարկման մասնագետ,

Ա. Վարդանյան՝ «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի համակարգչային տեխնիկայի, ցանցերի և հարակից սարքերի սպասարկման բաժնի համակարգչային տեխնիկայի սպասարկման մասնագետ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Հ. Սարաջյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի ֆինանսաբյուջետային բաժնի գնումների մասնագետ Հ. Գուլաբյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

### 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Ընթացակարգը 22, 25, 30, 31 չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ 22, 25, 30, 31 ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022թ-ի նոյեմբերի 21-ին Հանձնաժողովի քարտուղար Հ. Գուլաբյանը Հանձնաժողովի անդամներին տեղեկացրեց, որ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել է № 03/26-1/20248-2022 գրություն, որով տեղեկացվում է, որ 15/11/2022թ. և 16/11/2022թ. ժամը 09:00-ից սկսած էլեկտրոնային աճուրդների համակարգը աշխատել է խափանումներով, ինչի արդյունքում խոչընդոտվել է ինչպես ժամը 09:00-ից մինչև ժամը 16:30-ն անցկացվելիք աճուրդների, այնպես էլ նշված ժամանակահատվածում հրավերներով հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանված ընթացակարգերին մասնակցության հայտերի ներկայացման բնականոն ընթացքը և հանձնարարվել է ՀՀ կառավարության 02/05/2019թ. N 516-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված գնման ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարել չկայացած:

Տվյալ ժամանակահատվածում է տեղի ունեցել նաև ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/35 ծածկագրով գնման ընթացակարգի 22, 25, 30, 31 չափաբաժինների մասով հակադարձ աճուրդը:

Հաշվի առնելով վերոգրյալը Հանձնաժողովը որոշեց.

1. ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/35 ծածկագրով գնման ընթացակարգը՝ 22, 25, 30, 31 չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Հ. Սարաջյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ա. Միքաելյան ____________

Ա. Վարդանյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Հ. Գուլաբյան ____________